ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ԳՀԱՊՁԲ-7/15-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան .05.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից և «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, հիմք ընդունելով 12.03.2018թ. կնքված № ԳՀԱՊՁԲ-7/15-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.1.1 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով, Համաձայանագրի № 1 Հավելվածով՝ նախատեսված ժամկետներում մատակարարել Պայմանագրի №1 Հավելվածով նախատեսված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդն պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարվող ապրանքի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի № 1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 8 718 600 (ութ միլիոն յոթ հարյուր տասնութ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Գինը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով, Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդը մատակարարված ապրանքների դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ քան 10.12.2018թ.:

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 թերթից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի № 1, № 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Պահապան» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**ք. Երևան, Ավան, Քուչակի փ. 16/2շ.**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ**
Հ/Հ 900011144079	**Հ/Հ 11500198133700**
ՀՎՀՀ 02522157	**ՀՎՀՀ 00882372**
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	**Տնօրեն**
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 1

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Միասնական անվանացանկի CPV կոդը	Գնման առարկան	Չափման միավոր	Միավորի գինը	Քանակը	Գնման ժամանակացույց, ըստ 2018թ. 2-րդ եռամսյակի ամիսների		
						Ապրիլ	Մայիս	Հունիս
1	18311190/315	խալաթներ /Խալաթ՝ վիրաբուժական բամբակյա/	հատ	4800	500		500	
2	18311190/311	խալաթներ /Խալաթ՝ բամբակյա բժշկական/	հատ	3084	1000		1000	
3	18311190/317	խալաթներ /Խոհարարական բամբակյա գոգնոց/	հատ	858	2100		1200	900
4	18421130/308	ձեռնոցներ /Ձեռնոց՝ ամառային, սպիտակ/	զ-գ	1194	1200		1200	

Ծանոթություն.
Մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում և պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա՝ ք. Երևան, Արցախի 61 հասցեում, մատակարար կազմակերպության տրանսպորտով:

Հավելված N 2

Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկան	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	խալաթներ /Խալաթ՝ վիրաբուժական բամբակյա/	2 400 000	2 400 000	2 400 000	2 400 000	2 400 000	2 400 000	2 400 000	2 400 000
2	խալաթներ /Խալաթ՝ բամբակյա բժշկական/	3 084 000	3 084 000	3 084 000	3 084 000	3 084 000	3 084 000	3 084 000	3 084 000
3	խալաթներ /Խոհարարական բամբակյա գոգնոց/	1 801 800	1 801 800	1 801 800	1 801 800	1 801 800	1 801 800	1 801 800	1 801 800
4	ձեռնոցներ /Ձեռնոց՝ ամառային, սպիտակ/	1 432 800	1 432 800	1 432 800	1 432 800	1 432 800	1 432 800	1 432 800	1 432 800

** Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«Պահապան» ՍՊԸ
տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-7/15-1

ք. Երևան 12.03.2018թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև՝ Գնորդ, մի կողմից «Պահապան» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Մելիք-Սարգսյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար պայմանագրի N 2 հավելվածով :

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 10 629 000 (տաս միլիոն վեց հարյուր քսանինը հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ քան 2018թ. դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.1.1 Պայմանագրով նախատեսված ապրանքների ձեռքբերումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում. Գնորդը չի կրում պայմանագրը միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9.1. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	**«Պահապան» ՍՊԸ**
ք. Երևան Բագրևանդի 5	**ք. Երևան, Ավան, Քուչակի փ. 16/2շ.**
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	**"Հայբիզնեսբանկ" ՓԲԸ**
Հ/Հ 900011144079	**Հ/Հ 11500198133700**
ՀՎՀՀ 00867415	**ՀՎՀՀ 00882372**
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	**Տնօրեն**
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	**Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ**

Հավելված N1
N ԳՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. **Խալաթ վիրաբուժական բամբակյա (հատ)** ԳՕՍ- 25194-82: Արտադրվում է 160 գրամ մակերեսային խտությամբ 35% բամբակ և 65% պոլիէսթեր բաղադրության բաց կապույտ գույնի գործվածքից: Խալաթը օձիքի մասում հետևից կոճկվում է կարգավորվող կապիչներով և կապվում է գոտկատեղից գոտիով՝ հետևի մասից: Երկու վրանկար կողային և մեկ կրծքային գրպաններով: Օձիքը կանգունակով: Թևքերի եզրերը բացվածքով և կապիչներով: Խալաթի ներսի ձախակողմյան փեշին գոտկատեղի մասում պետք է ունենա տպագրական ներկով դրոշմ կամ պիտակ, որոնց վրա պետք է նշված լինի տեսականու չափը, արտադրող կազմակերպության անվանումը: Արտաքին տեսքը խալաթի ընդհանուր նկարագրին համարժեք: Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի, գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
2									
3	10	15	15						40
4	10	20	10	10	5	5			60
Ընդամենը %									100

2. **Խալաթ բամբակյա, բժշկական (հատ)**- ԳՕՍ-25194-82: Արտադրվում է 160 գրամ մակերեսային խտությամբ 35% բամբակ և 65% պոլիէսթեր բաղադրության սպիտակ գույնի գործվածքից: Ոլորող ձևվածքով կազմված է կենտրոնական կոճկվող լանջափեշից, մեջքից, օձիքից և թևքերից: Կոճկվում է 5 հատ ջերմակայուն պլաստմասայից կոճակներով:Կոճակների միջև հեռավորությունը 11 սմ: Առաջամասում մշակված են վրադիր գրպաններ, որից երկուսը կողային և մեկը ձախ կրծքամասում: Թևքերը ներկարված և մեկ կոճակօղակով կոճկվող մանժետով: Օձիքը ծալովի: Արտաքին տեսքը խալաթի ընդհանուր նկարագրին համարժեք: Խալաթի ներսի ձախակողմյան փեշին, գոտկատեղի մասում պետք է ունենա տպագրական ներկով դրոշմ կամ պիտակ, որոնց վրա պետք է նշված լինի տեսականու չափսը, արտադրող կազմակերպության անվանումը:

Փաթեթավորումը՝ հակերով, մեկ հակի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստ ԳՕՍ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի, գործվածքի բաղադրության և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափս-հասակային սանդղակ

Կրծքավանդակի շրջագիծը / Հասակը	48	50	52	54	56	58	60	62	Ընդամենը %
2									
3	10	15	15						40
4	10	20	10	10	5	5			60
Ընդամենը %									100

3. **Խոհարարական բամբակյա գոգնոց (հատ)** ԳՕՍ -9897-88 Արտադրվում է 160 գրամ մակերեսային խտությամբ 35% բամբակ և 65% պոլիէսթեր բաղադրության սպիտակ գույնի գործվածքից:Բաղկացած է ուղղանկյունաձև լանջապանակից, գոգնոցի երկարությունը 120սմ, լայնությունը կենտրոնական մասում 60-115սմ: Կենտրոնական մասում կարված վրադիր գրպան: Արտաքին տեսքը գոգնոցի ընդհանուր նկարագրին համարժեք: Փաթեթավորումը՝ հակերով, 1 հակի մեջ 50 հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, 1 պարկի մեջ՝ 5 հատ: Հակերը՝ պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, մատակարար և արտադրող կազմակերպությունների անվանումները, արտադրման ամիսն ու տարեթիվը: Շեղումները՝ ըստԳՕՍ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի, գործվածքի բաղադրության և

մատերնային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

4. **Ձեռնոց՝ ամառային սպիտակ (գոյգ)**



ГОСТ -5007-87 Գծագիր-1, 1-ին տեսակի: Պատրաստվում է, սպիտակ գույնի արհեստական մանրաթելերով տրիկոտաժե գործվածքից, 190-210 գրամ մակերեսային խտությամբ: Հինգմատնյա է, ձեռնոցի երեսամասը դեկորատիվ կարագծերով: Բազկակալի մանժետը, ներսից ձգվում է էլաստիկ ժապավենով: Չափսերը 24, 26, 28: Արտաքին տեսքը համաձայն էսքիզի: Փաթեթավորումը հակերով, մեկ հակի մեջ 50 հատ: Հակերը պիտակավորված, պիտակի վրա նշելով տեսականու անվանումը, քանակը, չափսը, մատակարար կազմակերպության անվանումը: Շեղումները՝ ըստ ԳՕՍՏ-ի: Մատակարար կազմակերպությունը, մատակարարումից առաջ պատասխանատու ստորաբաժանման համաձայնեցմանը պետք է ներկայացնի նմուշներ՝ 2 օրինակից: Պատվիրատուի պահանջով, մատակարար կազմակերպությունը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, և մակերեսային խտության վերաբերյալ, ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն:

Չափսի սանդղակ

Չափսը	24	26	28	Ընդամենը %
Ընդամենը %	25	40	35	100

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գին	Ընդհանուր գումար	Մատակարարման ենթակա քանակները
1	խալաթներ /խալաթ՝ վիրաբուժական բամբակյա/	հատ	500	4800	2 400 000	Ապրանքի ձեռքբերումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվելիք Համաձայնագրով սահմանված ժամկետում
2	խալաթներ /խալաթ՝ բամբակյա բժշկական/	հատ	1,000	3084	3 084 000	
3	խալաթներ /խոհարարական բամբակյա գոգնոց/	հատ	2,100	858	1 801 800	
4	ձեռնոցներ /Ձեռնոց՝ ամառային, սպիտակ/	զ-գ	2,800	1194	3 343 200	

Ծանոթություն՝ ապրանքատեսակների մատակարարումը՝ ք. Երևան, Արցախի 61, մատակարար կազմակերպության տրանսպորտով, մատակարարվող բոլոր ապրանքատեսակները պետք է լինեն նոր, չօգտագործված վիճակում:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Պահապան» ՍՊԸ
Տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV ծածկագիր	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում
1	խալաթներ /Խալաթ՝ վիրաբուժական բամբակյա/	18311190/315	
2	խալաթներ /Խալաթ՝ բամբակյա բժշկական/	18311190/311	
3	խալաթներ /Խոհարարական բամբակյա գոգնոց/	18311190/317	
4	ձեռնոցներ /Ձեռնոց՝ ամառային, սպիտակ/	18421130/308	

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Պահապան» ՍՊԸ
Տնօրեն

Վ. ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N __ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-7/15-1 ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն